

ՀՀ Սյունիքի մարզպետ Ս. Խաչատրյանի շնորհավորական ուղերձը Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրվա առթիվ

Սիրելի երեխաներ,

Ի սրտե շնորհավորում եմ այս պայծառ տոնի առթիվ: Յուրաքանչյուր հունիսի 1 ուրախության ու բարության, հույսի ու ժպիտի, իսկ մեծերիս համար պատասխանատվության ու հոգատարության արտահայտման առանձնահատուկ օր է: Այս տոնը մոլորակի բոլոր երկրների համար խորհրդանշում է խաղաղություն, հավատ և հույս ապագայի նկատմամբ:

Մենք անում ենք հնարավորը՝ երեխաների սոցիալական իրավունքները պաշտպանելու, առողջ ու կրթված սերունդ ունենալու համար, բայցև խոստովանում, որ բազում են անելիքներն ու չլուծված խնդիրները:

Մարզում ապրող երեխաների սոցիալական պաշտպանության երաշխիքների ստեղծումը մեր առաջնահերթ խնդիրներից է, քանզի նրանք են այսօրվա մեր գործունեության ամենահզոր խթանիչները և մեր պետության վաղվա օրը կերտողները:

Առանձնահատուկ շնորհավորում եմ ծնողներին, որոնց ուսերին է դրված մանուկներին ընտանեկան ջերմությամբ շրջապատելու, սերունդների առողջ հերթափոխ ապահովելու առաքելությունը: Թե՛ ձեր և թե՛ յուրաքանչյուրիս պարտքն է անել ամեն ինչ, որպեսզի նրանց ամեն մի օրը լինի գորովանքով ու քնքշանքով լի:

Մեկ անգամ ևս շնորհավորում եմ բոլոր երեխաներին, մաղթում արևշատություն ու անհոգ մանկություն:

Թող իրականանան ձեր բոլոր երազանքները, իսկ հաջողությունն ու բարությունը ուղեկցեն ձեզ միշտ և ամենուր:

ՀՀ Սյունիքի մարզպետ

Ս. Խաչատրյան

1 հունիս 2013թ.